ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՀՐԱՉԻՆ ՎԱՐԴԱՆԻ

«ՍՓՅՈՒՌՔԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ-ՏԵՍԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ (20-ՐԴ Դ. ՎԵՐՋ-21-ՐԴ Դ. ՍԿԻԶԲ)»

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Եղիազարյան Արման Սամվելի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Թոլոյյան Խաչիկ Մինասի

պատմական գիտությունների դոկտոր
Խուդինյան Գևորգ Սարգսի

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2023 թ. դեկտեմբերի 21-ին, ժամը 14:30-ին Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում գործող ՀՀ ԲՈԿ-ի Համաշխարհային պատմության 069 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0025, Երևան, Աբովյան փողոց, 52):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գրադարան-ընթերցարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. նոյեմբերի 10-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Սմբատ Հովհաննիսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: 1980-ականների վերջից և հատկապես 1990-ականներից սկսած աշխարհի տարբեր երկրներում գիտական, ակադեմիական շրջանակների հետաքրքրությունը «սփյուռք» երևույթի նկատմամբ կտրուկ աճել է, կատարվել են մեծամասշտաբ տեսական և էմպիրիկ ուսումնասիրություններ: Եթե մինչև 1980-ականների ավարտը իրականացվում էին հիմնականում հայկական, հրեական, հունական և այլ սփյուռքների պատմությանը, համայնքներին, հայրենիքի հետ հարաբերություններին նվիրված ուսումնասիրություններ, ապա 1980-ականների վերջից գիտության մեջ բոլորովին նոր էր սփյուռքի վերաբերյալ տեսական միտքը, սփյուռքի տեսաբանումը, և աստիճանաբար գիտությունների շարքում իր ուրույն տեղն սկսեց հարթել միջգիտակարգային կամ բազմագիտակարգային սփյուռքագիտությունը:

Ատենախոսության թեմայի ուսումնասիրման արդիականությունը առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ այսօր արդեն, ըստ էության, կարելի է որոշակիորեն ամփոփել և վերլուծել շուրջ երեք տասնամյակի ընթացքում տարբեր ուսումնասիրողների կողմից արված տեսաբանական ընդհանրացումները:

Միջգիտակարգային բնույթով պայմանավորված՝ սփյուռքագիտական ուսումնասիրություններում քննարկվում է հարցերի շատ լայն շրջանակ, սակայն հենքային նշանակություն ունեն տեսաբանական ուղղությունների առանձնացման, «սփյուռք» եզրույթի սահմանման, հիմնական առանձնահատկությունների, տիպաբանության, ինչպես նաև սփյուռքների քաղաքական դերի, հայրենիք-սփյուռք հարբերությունների հիմնախնդիրները: Ուստի այս հանգամանքով, ինչպես նաև թեկնածուական ատենախոսության շրջանակներում հիմնախնդիրների շատ ավելի լայն շրջանակ ընդգրկելու անհնարինությամբ պայմանավորված է եղել ուսումնասիրության բևեռվածությունը նշված ուղղություններով:

Վերոնշյալ հիմնախնդիրները և առհասարակ «սփյուռք» երևույթին առնչվող մյուս իրողությունները տեսաբանների կողմից քննվում և մեկնաբանվում են տարբեր հայեցակետերից, ուստի դրանց համակարգային ուսումնասիրումը, վերլուծությունը ևս գիտական անհրաժեշտություն է, որը թեմայի հետազոտումը դարձնում է արդիական: Այս առումով շեշտադրելի է հատկապես հայկական սփյուռքի, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների պարագան, որի ուսումնասիրումը տեսության դիտանկյունից թույլ է տալիս նոր հայացքով դիտել և գնահատել երևույթները:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Հետազոտության նպատակը սփյուռքի վերաբերյալ արդի՝ 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի տեսությունների, սփյուռքի պատմագիտական-տեսական դիսկուրսի ուսումնասիրությունը և վերլուծությունն է:

Աշխատանքում առաջադրվել են հետևյալ հետազոտական խնդիրները.

1. Ուսումնասիրել սփյուռքների նկատմամբ գիտական հետաքրքրության աճի և միջգիտակարգային սփյուռքագիտության ձևավորման գործընթացը:

2. Ուսումնասիրել և վերլուծել «սփյուռք» եզրույթի համար տեսաբանների առաջարկած տարբեր սահմանումները, աշխարհասփյուռ հայության պարագայում «սփյուռքի» կիրառությունը՝ որպես ինքնաբնութագրող բառ, իսկ հայ պատմագիտության մեջ՝ որպես եզրույթ:

3. Հետազոտել և վեր հանել սփյուռք եզրույթի կիրառության և իմաստային ընդլայնմանը հանգեցրած գործոնները:

4. Ուսումնասիրել և վերլուծել սփյուռքը հայրենիքից դուրս ապրող այլ խմբերից տարբերակող հիմնական հատկանիշները և ինքնության առանձնահատկությունները:

5. Ուսումնասիրել և վերլուծել համեմատական ուսումնասիրության արդյունքում սփյուռքների տիպաբանության համար տեսաբանների կողմից առաջարկված մոդելները:

6. Ուսումնասիրել և վերլուծել հայկական սփյուռքի տիպաբանական առանձնահատկությունները, պատմության ընթացքում տեղի ունեցած կերպափոխությունները:

7. Ուսումնասիրել և ամփոփ վեր հանել միջազգային հարաբերություններում սփյուռքների դերակատարության հիմնական ուղղությունները:

8. Ուսումնասիրել սփյուռք-ընդունող երկիր փոխհարաբերությունների վերաբերյալ տեսաբանական ընդհանրացումներն ու մեկնաբանությունները:

9. Ուսումնասիրել սփյուռք ունեցող պետությունների՝ սփյուռքի նկատմամբ տարվող պետական քաղաքականության տիպաբանությունը:

10. Վերլուծել և գնահատել հայկական սփյուռքի քաղաքական դերակատարության խնդիրը արդի փուլում:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Հետազոտության նպատակի և խնդիրների բնույթով պայմանավորված է ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ուսումնասիրությունը կատարվել է վերլուծական-համադրական մեթոդի կիրառմամբ՝ իրականացնելով թեմային վերաբերող աղբյուրների և գիտական գրականության հավաքում, ըստ ատենախոսության ենթաթեմաների բաշխում և համակարգում, հեղինակային քննական վերլուծություն և արդյունքների ամփոփում: Որպես էմպիրիկ վերլուծության մեթոդներ ընտրվել են տվյալների տեսական վերլուծության մեթոդներ՝ գիտական գրականության վերլուծություն, ընդհանրացում, մեկնաբանություն: Կիրառվել են համեմատական և նկարագրողական, պատմահամեմատական, համակարգային քննության մեթոդները:

Սփյուռքագիտության միջգիտակարգային բնույթով պայմանավորված՝ հետազոտության համար տեսամեթոդաբանական հիմք են ծառայել սփյուռքի, քաղաքագիտության, սոցիոլոգիայի և այլ բնագավառների տեսությունները:

Աշխատանքի գիտական նորույթը: Աշխատանքի գիտական նորույթը ժամանակակից պատմագիտական-տեսական դիսկուրսում ձևավորված՝ սփյուռքի վերաբերյալ հիմնական տեսությունների և դրանց դրույթների ընդհանրացումն է,

սփյուռքագիտական հետազոտությունների մեթոդաբանական առանձնահատկությունների վերհանումը և սփյուռքների հիմնական առանձնահատկությունների տիրույթում հայկական սփյուռքի օրինակի քննարկումը:

Իրականացված հետազոտության արդյունքում առաջ են քաշվել գիտական նորույթ պարունակող հետևյալ դրույթները.

- Հանգամանորեն ուսումնասիրվել և ներկայացվել են սփյուռքի հիմնական տեսաբանական ուղղությունները:
- Վերլուծության են ենթարկվել «սփյուռք» հասկացության սահմանման ու կիրառության վերաբերյալ տեսաբանների և մասնավորապես Խ. Թոլոյանի մոտեցումները, «սփյուռք» հասկացության իմաստաբանական փոփոխություններն ու դրա պատճառները:
- Ուսումնասիրվել և վերլուծվել է հայկական սփյուռքի վերաբերյալ «սփյուռք» եզրույթի կիրառությունը, ինչպես նաև նրան առնչվող մի շարք այլ բառերի եզրութային արժեքը:
- Հանգամանորեն ներկայացվել և վերլուծության են ենթարկվել սփյուռքի հիմնական առանձնահատկությունները, համեմատական ուսումնասիրութունների արդյունքում սփյուռքների դասակարգման համար առաջարկված մոդելները:
- Ուսումնասիրվել և վերլուծվել են հայկական սփյուռքի տիպաբանական առանձնահատկությունները և պատմության ընթացքում տեղի ունեցած կերպափոխությունները:
- Ամփոփ ներկայացվել և վերլուծվել են միջազգային հարաբերություններում սփյուռքների քաղաքական դերակատարության ուղղությունները, ակտիվության այն ձևերը, որոնք ցուցաբերում են սփյուռքները:
- Ուսումնասիրվել և վերլուծվել է սփյուռք-ընդունող երկիր փոխհարաբերությունների տեսական համատեքստը:
- Ամփոփ ներկայացվել և վերլուծվել է սփյուռք ունեցող պետությունների կողմից իրենց սփյուռքի նկատմամբ վարած պետական քաղաքականության տիպաբանությունը:
- Ուսումնասիրվել և գնահատվել է հայկական սփյուռքի քաղաքական դերակատարության խնդիրը արդի փուլում:

Ատենախոսության տեսական նշանակությունը: Ատենախոսությունը, ամփոփելով սփյուռքի սահմանման, սփյուռքների դասակարգման, սփյուռքի քաղաքական դերի վերաբերյալ հիմնական տեսությունները, կնպաստի «սփյուռք» հասկացության գիտական ընկալումների խորացմանը, որոշակի ներդրում կհանդիսանա սփյուռքի վերաբերյալ տեսական ուսումնասիրությունների առաջմղման տեսանկյունից: Հետազոտության արդյունքները կարող են հիմք ծառայել նոր գիտական ուսումնասիրությունների համար:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Ուսումնասիրությունը բացի գիտականից ունի նաև կիրառական նշանակություն: Սփյուռքի վերաբերյալ տեսությունների համապարփակ ուսումնասիրությունը ընդգծում է քաղաքական,

տնտեսական, հասարակական դերակատարման և աշխարհաքաղաքական ազդեցության հնարավորությունների այն ողջ ներկապնակը, որը վերնախավերի համապատասխան ուղղորդումների և առաջնորդման դեպքում կարող են ունենալ սփյուռքները: Նշված իրողությունների խորքային ուսումնասիրումը քաղաքականություն մշակողներին հնարավորություն է տալիս կողմնորոշվելու սփյուռքի նկատմամբ արդյունավետ քաղաքականության, ռազմավարությունների մշակման և գործադրման հարցում:

Հետազոտության արդյունքները և սփյուռքի արդի տեսական հիմնախնդիրների դիտանկյունից մասնավորապես հայկական սփյուռքի օրինակի դիտարկումը ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական կարևոր նշանակություն և կարող է օգտակար լինել հայկական սփյուռքի պատմության, նրա նկատմամբ ՀՀ քաղաքականության ճանաչողության և գնահատման տեսանկյունից: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել ՀՀ ռազմավարական փաստաթղթերի, Սփյուռքի նկատմամբ ՀՀ քաղաքականության մշակման համար:

Ատենախոսության դրույթներն ու եզրակացությունները կարող են հետաքրքրել պետական կառույցներին, ՀԼՄ-ներին, հայկական սփյուռքի համայնքային կառույցներին:

Ատենախոսության մեջ կիրառված նյութերն ու վերլուծությունները կարող են օգտագործվել որպես հատուկ դասընթացների մաս՝ սփյուռքներին առնչվող տարբեր հարցերի անդրադառնալիս:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ հայոց պատմության ամբիոնը: Իսկ նրա հիմնական արդյունքները և դրույթները հրապարակվել են թվով յոթ գիտական հոդվածներում: Ատենախոսության թեմային առնչվող մի քանի խնդիրներ ներկայացվել են հայաստանյան և միջազգային գիտաժողովների ժամանակ:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը: Ատենախոսության թեմայի շրջանակներում դիտարկվել են հենքային նշանակության այն աշխատությունները, որոնցում ձևավորվել են սփյուռքի վերաբերյալ տեսական գաղափարները, ծավալվել է սփյուռքի արդի պատմագիտական-տեսական դիսկուրսը:

Սփյուռքագիտության զարգացման գործում նշանակալի է ԱՄՆ Վեսլեյան համալսարանի պրոֆեսոր Խաչիկ Թոլոյանի ներդրումը, ով սփյուռքի ականավոր տեսաբաններից է և հեղինակել է հայկական սփյուռքի վերաբերյալ բարձրարժեք ուսումնասիրություններ: Սփյուռքագիտության համար առանցքային են նրա «Ազգ-պետությունը և նրա Այլերը. նախաբանի փոխարեն» (The Nation-State and its Others: In Lieu of a Preface)[1], «Սփյուռքագիտության ժամանակակից դիսկուրսը. Հարավային Ասիայի, Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի համեմատական

[1] Տե՛ս **Tölölyan Kh.,** The Nation-State and its Others: In Lieu of a Preface. Diaspora, 1991, 1 (1), pp. 3-7.

ուսումնասիրություն» (The contemporary discourse of diaspora studies, Comparative Studies of South Asia, Africa and the Middle East)[2], «Վերաքննելով սփյուռք(ներ)ը. պետականազուրկ ուժը անդրազգային պահին» (Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment)[3], «Սփյուռքի դիսկուրսի ամերիկյան մոդելը» (The American Model of Diasporic discourse)[4] հոդվածները: Հայկական սփյուռքը տեսության դիտանկյունից քննելու առումով առանձնանում է նրա «Վերասահմանելով սփյուռքները. հին մոտեցումներ, նոր ինքնություններ. հայկական սփյուռքը միջազգային համատեքստում» (Redefining Diasporas: Old Approaches, New Identities. The Armenian Diaspora in an International Context)[5] աշխատությունը:

Սփյուռքին նվիրված աշխատություններից նշելի է անգլիացի սոցիոլոգ Ռ. Քոհենի «Գլոբալ սփյուռքներ. ներածություն» (Global diasporas: an introduction)[6] աշխատությունը, որտեղ հանգամանալից անդրադարձ է կատարվում սփյուռքի սահմանմանը և տիպաբանությանը:

«Սփյուռք» եզրույթի սահմանման և բնորոշման համար ելակետային է ԱՄՆ Կոլորադոյի Բոլդերի համալսարանի քաղաքական գիտությունների պատվավոր պրոֆեսոր Վ. Սաֆրանի՝ «Սփյուռքները ժամանակակից հասարակություններում. հայրենիքի և վերադարձի միֆերը» (Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return) հոդվածը[7], որտեղ հարացուցային 6 հիմնական կետով հեղինակը բնութագրում է տիպական համարվող սփյուռքը:

Արժեքավոր է հրեա քաղաքագետ Գ. Շեֆֆերի «Սփյուռքի քաղաքականություն. արտերկրում՝ ինչպես տանը» (Diaspora Politics. At Home Abroad) աշխատությունը[8], որտեղ ներկայացվում են սփյուռքների առաջացման հիմնական պատճառները, տեսակները, սփյուռքների քաղաքական դերակատարության բնույթը:

Հիշատակելի է անգլիացի մարդաբան, Գերմանիայի Գյոթինգենի համալսարանի սոցիոլոգիայի և էթնոլոգիայի պրոֆեսոր Ս. Վերթովեկի հոդվածը[9], որտեղ փորձ է արվում ներկայացնելու սփյուռքի երեք դրսևորումները:

---

[2] Տե՛ս **Tölölyan Kh.,** The contemporary discourse of diaspora studies, Comparative Studies of South Asia, Africa and the Middle East, 27 (3), 2007, pp. 647-655.

[3] Տե՛ս **Tölölyan Kh.,** Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment, Diaspora: A journal of Transnational Studies, 1996, 5 (1), pp. 3-36.

[4] Տե՛ս **Tölölyan Kh.,** The American Model of Diasporic discourse. In Diasporas and Ethnic Migrants, Germany, Israel and Russia in Comparative Perspective, ed. by Munz R., Ohliger R., London, 2003, pp. 56-73.

[5] Տե՛ս **Tölölyan Kh.,** Redefining Diasporas: Old Approaches, New Identities. The Armenian Diaspora in an International Context, London, Armenian Institute, 2002.

[6] Տե՛ս **Cohen R.,** Global Diasporas: An Introduction, London, 2008.

[7] Տե՛ս **Safran W.,** Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return, Diaspora: a Journal ofTransnational Studies, 1(1), New York, 1991, pp. 191-213.

[8] Տե՛ս **Sheffer G.,** Diaspora Politics. At Home Abroad, New York, 2003.

[9] Տե՛ս **Vertovec S.,** Three Meanings of Diaspora, Exemplified Among South Asian Religions. Diaspora: Ajournal of Transnational Studies, 7(2), pp. 277-299.

Կարևոր է ԱՄՆ Կոռնելի համալսարանի Միջազգային հետազոտությունների պատվավոր պրոֆեսոր Մ. Էսմանի «Սփյուռքները ժամանակակից աշխարհում» (Diasporas in the contemporary World)[10] աշխատությունը, որտեղ առաջարկվում է սփյուռքի տիպաբանման մոդել, տեսականորեն ներկայացվում են սփյուռքի՝ ընդունող պետության և հայրենիքի հետ հարաբերությունների, քաղաքական դերի առանձնահատկությունները:

Հետազոտության համար սփյուռքի տեսաբանների կողմից կատարված ուսումնասիրություններից բացի կարևոր նշանակություն ունեն նաև այդ ուսումնասիրությունների վերաբերյալ կատարված վերլուծական ուսումնասիրությունները: Մասնավորապես հայրենի սփյուռքագիտության մեջ կատարված աշխատանքներից հիշատակելի է Ա. Բեժանյանի «Սփյուռքի մասին տեսությունների համառոտ ակնարկ» հոդվածը[11], որտեղ ներկայացվում են սփյուռքի հիմնական տեսությունները և կատարվում է տեսությունների դասակարգում:

Սփյուռքի տեսությունների, ՀՀ-Սփյուռք գործակցության հնարավորությունների վերաբերյալ ընդգրկուն և արժեքավոր փաստեր են ներկայացվել և վերլուծվել Տ. Թորոսյանի և Մ. Սարադյանի «Հայկական սփյուռքի հնարավորությունները և ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-քաղաքական գործընթացների վրա»[12] աշխատության մեջ: Արժեքավոր են նաև Տ. Թորոսյանի և Ա. Վարդանյանի «Տրանսֆորմացվող սփյուռքների առանձնահատկությունները. հայկական սփյուռքի դեպքը»[13], «Սփյուռքների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները»[14] հոդվածները, որոնք անդրադառնում են սփյուռքների տիպաբանությանը և մասնավորապես հայկական սփյուռքի օրինակին:

Հատկանշական է Վ. Դյատլովի և Է. Մելքոնյանի համահեղինակած «Հայկական սփյուռք. սոցիալ-մշակութային տիպաբանության ակնարկներ» (Армянская диаспора: очерки социокультурной типологии) աշխատությունը[15], որտեղ տեսականորեն քննության է ենթարկվում սփյուռք երևույթը՝ հիմնվելով հայկական սփյուռքի օրինակի ուսումնասիրության վրա: Հսկայական պատմական և սոցիոլոգիական տվյալների հիման վրա մանրամասնորեն վերլուծվում է հայկական սփյուռքի առաջացումը, նրա զարգացումը և տարբեր երկրներում հայկական համայնքների գործունեությունը:

---

[10] Տե՛ս **Esman M.,** Diasporas in the contemporary World, Cambridge, 2009, 210.

[11] Տե՛ս **Բեժանյան Ա.,** Սփյուռքի մասին տեսությունների համառոտ ակնարկ, «Լրաբեր Հասարակական Գիտությունների», 2013, N 1, էջ 211-227:

[12] Տե՛ս **Թորոսյան Տ., Սարադյան Մ.,** Հայկական սփյուռքի հնարավորությունները և ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-քաղաքական գործընթացների վրա, Ե., 2017:

[13] Տե՛ս **Թորոսյան Տ, Վարդանյան Ա.,** Տրանսֆորմացվող սփյուռքների առանձնահատկությունները. հայկական սփյուռքի դեպքը, «Հայկական քաղաքագիտական հանդես», 2018 (9) 1, էջ 5-28:

[14] Տե՛ս **Թորոսյան Տ., Վարդանյան Ա.,** Սփյուռքների համեմատական վերլուծության մոդելավորման խնդիրները, «Հայկական քաղաքագիտական հանդես», 2018, 2 (9), էջ 5-32:

[15] Տե՛ս **Дятлов В., Мелконян Э.,** Армяская диаспора: очерки социокултурной типологии, Ереван, 2009.

ՀՀ-Սփյուռք գործակցության վերաբերյալ արժեքավոր է Է. Մինասյանի «Հայրենիք-Սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001-2017 թթ.) աշխատությունը[16], որտեղ սկզբնաղբյուրների և գրականության քննական ուսումնասիրության և վերլուծության արդյունքում լուսաբանվում է ՀՀ-Սփյուռք հարաբերությունների 2001-2017 թթ. ժամանակահատվածը:

Թեմային առնչվող նյութի տեսակետից արժեքավոր են Ա. Եղիազարյանի «Հայկական քաղաքակրթությունը և հայության պատմական հեռանկարը» հոդվածը[17], որն անդրադառնում է հայկական համազգային քաղաքակրթական միջավայրի ձևավորման անհրաժեշտության հարցին, Ա. Եղիազարյանի «Հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման փորձ»[18] և «Հայ սփյուռքի պատմության պարբերացումը»[19] հոդվածները, որոնցում դիտարկվում է Հայ գաղթաշխարհի և Հայկական սփյուռքի ժամանակագրական ամբողջական պատկերը՝ յուրաքանչյուր փուլին բնորոշ առանձնահատկությունների ընգծմամբ:

Արժեքավոր է նաև Լ. Աբրահամյանի «Հայաստանը և Հայկական սփյուռքը. տարանջատում և հանդիպում»[20] հոդվածը, որում փորձ է արվում սահմանելու սփյուռքի հայկական մոդելը:

Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուրներ կարևոր են Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ինստիտուցիոնալ հիմքերին վերաբերող մի շարք իրավական ակտեր, ռազմավարական, հայեցակարգային փաստաթղթեր[21]:

---

[16] Տե՛ս **Մինասյան Է.,** Հայրենիք-Սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001-2017 թթ.), Ե., 2018:

[17] Տե՛ս **Եղիազարյան Ա.,** Հայկական քաղաքակրթությունը և հայության պատմական հեռանկարը, Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում, գիտաժողովի նյութեր, Ե., 2013, էջ 81-92:

[18] Տե՛ս **Եղիազարյան Ա.,** Հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման փորձ, «Սփյուռքագիտություն», տարեգիրք, 2013, թիվ 2, էջ 3-22:

[19] Տե՛ս **Եղիազարյան Ա.,** Հայ սփյուռքի պատմության պարբերացումը, «Հայագիտության հարցեր», Ե., 2014, թիվ 2, էջ 33-51:

[20] Տե՛ս **Աբրահամյան Լ.**, Հայաստանը և Հայկական սփյուռքը. տարանջատում և հանդիպում, 21-րդ դար, 1 (11), 2006, էջ 31-52:

[21] Տե՛ս «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ», Ե., 2010: Տե՛ս նաև «Հայաստանի Հանրապետության օրենքը հայրենադարձության մասին, նախագիծ», (http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=5019&Reading=0&lang=arm&enc=utf8): Տե՛ս նաև «Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը Հայաստանի հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», (https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189): Տե՛ս նաև «Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը հայկական սփյուռքի հետ Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգում միասնական քաղաքականության իրականացման մասին», (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86167): Տե՛ս նաև «Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումը Վարչապետի աշխատակազմի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին», (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=139646): Տե՛ս նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության Սփյուռքի հետ կապերի գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին», (https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=9884): Տե՛ս նաև «ՀՀ կառավարության որոշումը «ՀՀ արտաքին գործերի նախարարության Սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեի աշխատակազմ» պետականկառավարչական հիմնարկ ստեղծելու, աշխատակազմի կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին», (http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=44496): Տե՛ս նաև «Հայաստանի Հանրապետության

Հետազոտության ամբողջացման համար կարևոր նյութ են հանդիսացել նաև սփյուռքին, Հայաստան-Սփյուռք հարաբերություններին նվիրված մի շարք այլ աշխատություններ, էլեկտրոնային և տպագիր պարբերականներում լույս տեսած վերլուծություններ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է 189 էջ:

Ներածության մեջ ձևակերվել և հիմնավորվել է թեմայի ուսումնասիրման կարևորությունն ու արդիականությունը, ներկայացվել են հետազոտության հիմնական նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական արժեքը, ինչպես նաև մեթոդաբանությունը և ուսումնասիրվածության աստիճանը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ «Սփյուռքի տեսաբանումը և «սփյուռք» հասկացության իմաստաբանական, հայեցակարգային փոփոխությունները», նվիրված է սփյուռքի հիմնական տեսություններին և «սփյուռք» եզրույթի գիտական սահմանումներին:

Առաջին ենթագլխում՝ **«Սփյուռքի հիմնական տեսությունները և «սփյուռքի» սահմանման խնդիրը տեսության մեջ»,** ներկայացվել է սփյուռքագիտության ձևավորման ընթացքը, սփյուռքի վերաբերյալ տեսաբանական հիմնական ուղղությունները և դրանց դասակարգումը, «սփյուռք» եզրույթի գիտական սահմանման շուրջ առկա մոտեցումները: Ընդգծվում է, որ ընդամենը մի քանի տասնամյակի ընթացքում կատարվել են պատկառելի քանակությամբ ուսումնասիրություններ սփյուռքի և նրա տարբեր ասպեկտների ուղղությամբ: Առանձնացվել են տեսաբանական երեք հիմնական ուղղություններ, որոնք ոչ միայն տարբերվում են մի շարք իրողությունների մեկնաբանման հարցում, այլև երբեմն գտնվում են հակադիր բևեռներում:

Երկրորդ ենթագլխում՝ **««Սփյուռք» հղացքը սփյուռքի տեսաբան Խաչիկ Թոլոյյանի մեկնությունների ծիրում»** ներկայացվել են սփյուռքի տեսաբան

կառավարության որոշումը «Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին», (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=78354):

Խաչիկ Թոլոյյանի մոտեցումները սփյուռքի սահմանման, սփյուռքի և էթնիկ խմբերի տարբերակման, ժամանակի ընթացքում «սփյուռքի» իմաստաբանական և հայեցակարգային փոփոխությունների, ինչպես նաև այդ փոփոխություններին հանգեցրած գործոնների վերաբերյալ:

«Սփյուռքի» համար բանաձևային նշանակություն ունի Խ. Թոլոյյանի «անդրազգային պահի պետականազուրկ իշխանություն» ("stateless power in the transnational moment") ձևակերպումը, ըստ որի՝ սփյուռքը, ի տարբերություն հայրենիքից դուրս հաստատված այլ խմբերի, ենթադրում է համախմբվելու, կազմակերպվածության, հանձնառությունների, ուստի և հավակնությունների բարձր աստիճան հասարակական, քաղաքական, մշակութային և այլ ոլորտներում: Այս համատեքստում Խ. Թոլոյյանը դիտարկել է հայկական սփյուռքի օրինակը, սակայն, «անդրազգային պահի պետականազուրկ իշխանություն»-ը տալով իբրև տեսական մակարդակի ձևակերպում, այն դուրս է բերել տարածության և ժամանակի չափումներից՝ հուշելով, որ պատմության ցանկացած շրջափուլում նման համախմբումը ազգի համար գոյություն ունի որպես մշտառկա հնարավորություն:

Երրորդ ենթագլխում՝ **««Սփյուռքը» և նրան առնչվող եզրույթները Հայկական սփյուռքի պատմության խորապատկերում»**, վերոնշյալ երկու ենթագլուխների տեսական վերացարկումների համատեքստում դիտարկվել է հայկական սփյուռքի օրինակը, ներկայացվել է հայկական իրականության մեջ «սփյուռքի»՝ որպես ինքնաբնութագրող բառի, իսկ հայ պատմագիտության մեջ՝ որպես եզրույթի կիրառությունը, հայերենում սփյուռքին առնչվող մի շարք բառերի եզրութային արժեքը: Շեշտադրելի է մասնավորապես, որ հայ պատմագիտության մեջ մինչև Հայոց ցեղասպանությունը և դրանից հետո ձևավորված իրականություններն անվանելու համար առկա է համապատասխանաբար հայ գաղթաշխարհ և հայ սփյուռք (Սփյուռք) բաժանումը, որը նպատակ ունի ընդգծելու միևնույն երևույթի պատմականորեն որակապես տարբեր փուլերը և արվել է նախքան Արևմուտքում կծավալվեր գիտական բանավեճը, թե որ խմբերը կարելի է կոչել «սփյուռք», որոնք՝ ոչ: «Սփյուռք» բառը լիովին կիրառելի է հայ գաղթաշխարհի վերաբերյալ. չնայած այն հանգամանքին, որ սփյուռքը, որպես ինքնաբնութագրող բառ, հայության շրջանում սկսել է օգտագործվել միայն 1920-ականներից, որպես սոցիալական ձևավորում՝ հայ գաղթաշխարհը տիպիկ սփյուռքային երևույթ է, երբ այն դիտում ենք սփյուռքի արդի տեսության դիտանկյունից, երևույթի բնութագրման համար ընտրված չափորոշիչներով: Հայ գաղթաշխարհը այդ տեսանկյունից դիտարկելը և պատմության իմաստավորումը կարևորվում է հայության քաղաքակրթական հեռանկարին, հայ ինքնության տարրերի պահպանությանը և ապագային միտված օրակարգերի մշակմանն առնչվող հարցերի համատեքստում:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «Սփյուռքի հիմնական առանձնահատկությունները և տիպաբանությունը», անդրադառնում է սփյուռքի առանցքային բնութագրիչներին, ինքնությանն առնչվող հարցերին և սփյուռքների համեմատական ուսումնասիրությանը:

Առաջին ենթագլխում՝ **«Սփյուռքի հիմնական հատկանիշները և ինքնության առանձնահատկությունները»,** ներկայացվում են սփյուռքի այն հիմնական առանձահատկությունները, որոնցով սփյուռքը՝ որպես ուրույն սոցիալական ձևավորում, տարբերվում է հայրենիքից դուրս բնակություն հաստատած այլ խմբերից: Վերլուծվում են սփյուռքյան ինքնության առանձնահատկությունները՝ որպես մշտապես ձևավորման գործընթացում գտնվող իրողության: Նշելի է, որ համաշխարհայնացման գործընթացները որոշ ուսումնասիրողների համար հիմք են դարձել եզրակացնելու, որ սփյուռքները աստիճանաբար կհամարկվեն ընդունող երկրներում, կձուլվեն և վերջնականապես կանհետանան, սակայն խորքային դիտարկումները ցույց են տալիս, որ դրանք դեռևս պահպանվելու բավականաչափ ռեսուրսներ ունեն: Ավելին՝ համաշխարհայնացման և բազմամշակութայնության ներկայիս միտումները երբեմն ավելի շատ ուժեղացնում են որոշ սփյուռքների՝ հնարավորություն տալով ձեռք բերելու մշակութային, գաղափարական, տնտեսական և սոցիալական լրացուցիչ միջոցներ: Սփյուռքաբնակները հայրենիքի լեզվի, կրոնական, սոցիալական և մշակութային առանձնահատկության տարրերը պահպանում են կամ ամբողջապես, կամ միախառն, երկմշակութային ձևով:

Սփյուռքյան ինքնությունը պահանջում է այն պահպանելուն ուղղված հատուկ ջանքեր: Սփյուռքաբնակների՝ էթնո-ազգային ամբողջությանը պատկանելու գիտակցումը, դրա հետ նույնականացումը հաճախ ոչ թե ի սկզբանե տրված, այլ գիտակցված ընտրության արդյունք է:

Երկրորդ ենթագլխում՝ **«Սփյուռքի տիպաբանությունը և դասակարգման մոդելները»,** ներկայացվում է սփյուռքների համեմատական ուսումնասիրությունը և մի շարք տեսաբանների (Ջ. Արմսթրոնգ, Ա. Մեդամ, Կ. Բաթլեր, Ռ. Քոհենը, Մ. Էսման, Գ. Շեֆֆեր) կողմից սփյուռքների դասակարգման համար առաջարկված մոդելները: Վերջիններս համեմատական ուսումնասիրության տեսանկյունից ունեն գիտական կարևոր նշանակություն: Այդ մոդելները որպես գործիք, հնարավորություն են տալիս ունենալու տարբեր սփյուռքների խճանկարային պատկերը, համեմատելու նրանց ծագման, ձևավորման պատմությունը, ընդունող երկրներում հիմնական զբաղմունքները, հայրենիքի հետ հարաբերությունները և այլ հատկանիշներ: Միևնույն ժամանակ, սակայն, դրանք երբեմն ստվերում են այն ներքին խորքային գործընթացները, որոնք կարող են տեղի ունենալ սփյուռքներում:

Երրորդ ենթագլխում՝ **«Հայկական սփյուռքի տիպաբանական առանձնահատկությունները»,** քննարկելով և վերլուծելով սփյուռքի դասակարգման տարբեր մոդելներում հայկական սփյուռքին տրված բնութագրումները, փորձ է արվում վեր հանելու հայկական սփյուռքի տիպաբանական առանձնահատկությունները, ընդգծվում է մասնավորապես նրա կերպափոխվող բնույթը և այդ համատեքստում վերնախավերի (էլիտաների) կատարելիք առաքելությունը:

Տիպաբանական մոդելներում հայկական սփյուռքին տրված բնութագրումներից առանձնանում է, մասնավորապես «զոհ սփյուռք» բնութագրումը՝ հաշվի առնելով, որ աղետալի իրադարձությունները և հատկապես Ցեղասպանությունը անկյունաքարային դեր ունեն հայկական սփյուռքի ձևավորման, պատմական հիշողության և ինքնության համատեքստում: Մյուս կողմից, ակնհայտ է, որ կերպափոխությունների ենթարկվող հայկական սփյուռքի տիպաբանումը միայն գիտական, տեսաբանական խնդիր չէ. այն վերաբերում է հայության քաղաքակրթական հեռանկարին: Հանրահայտ է, որ սոցիալական գործընթացներում բառերը չեզոք չեն լինում: Նրանք ոչ միայն անվանում, պիտակավորում են երևույթները, այլև ազդում են նրանց վրա, ունակ են նրանց օժտելու նոր իմաստներով և հարաբերություններով: Այլ կերպ ասած՝ բառերն իրենք էլ ձևավորում են իրականություն: Այս իմաստով տիպաբանական այս կամ այն բնութագրումը ստանում է սոցիալ-մշակութային, քաղաքական լրացուցիչ կարևորություն: Աշխարհաքաղաքական ներկա զարգացումների պայմաններում ինչպիսի դիմագիծ կունենա կերպափոխվող հայկական սփյուռքը, և առհասարակ հայությունը՝ իբրև հավաքականություն, մեծապես կախված է վերնախավերի աշխատանքից, աշխարհի հայության, սփյուռքյան խիստ բազմաշերտ համայնքների համար ապագային միտված օրակարգեր մշակելու հրամայականին ի պատասխան կատարվող քայլերից:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «Սփյուռքը որպես քաղաքական գործոն. հայկական սփյուռքի քաղաքական դերակատարության խնդիրը արդի փուլում», քննության է ենթարկում սփյուռքների քաղաքական ակտիվության հիմնական ուղղությունները, հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր փոխհարաբերությունները:

Առաջին ենթագլխում՝ **«Սփյուռքի քաղաքական դերակատարության հիմնական ուղղությունները»,** ներկայացվում են սփյուռքների քաղաքական ակտիվության դրդապատճառները, քաղաքական օրակարգերի ձևավորման առանձնահատկությունները և ակտիվության այն հիմնական տեսակները, որոնք սփյուռքները ցուցաբերում են հայրենիքի և ընդունող պետության հետ հարաբերություններում: Զգալիորեն տարբերվում են մասնավորապես պետականազուրկ և պետականահենք սփյուռքների քաղաքական ակտիվության ուղղությունները: Պետականահենք սփյուռքները իրենց համայնքների և հայրենիքի հզորացման ուղղությամբ ջանքեր ներդնելուց բացի, մասնակցություն են ցուցաբերում հետարդիական, հետազգային գործընթացում, իսկ պետականազուրկ սփյուռքները սևեռվում են հայրենիքում կամ աշխարհագրական այն տարածքում, որը համարում են իրենց հայրենիքը, ինքնիշխան, ազգային պետություն հիմնելու գաղափարի վրա: Հատկանշական է, որ պատմական անցյալում պետականազուրկ են եղել նաև հայկական և հրեական սփյուռքները, և գործադրվել են պետություն հիմնելու ջանքեր: Մասնավորապես Հայաստանի ազատագրության գաղափարը 18-20-րդ դարերում ծաղկում էր ապրում տարբեր գաղթօջախներում, մշակվում էին Հայաստանի ազատագրման ծրագրեր, հայոց պետության պետական կարգի մոդելներ:

Երկրորդ ենթագլխում՝ **«Սփյուռքի նկատմամբ հայրենի (ծագման) երկրների պետական քաղաքականության տիպաբանությունը»,** նպատակ ունենալով վեր հանելու պետություն-սփյուռք արդյունավետ համագործակցության նախադրյալները՝ ներկայացվում են հայրենի պետությունների (ծագման երկրների) կողմից սփյուռքի նկատմամբ իրականացվող քաղաքականության տիպաբանությունը, ինստիտուցիոնալ և ռազմավարական առանձնահատկությունները, պետություն-սփյուռք արդյունավետ համագործակցության հիմնական սկզբունքները: Ընդգծվում է, որ ինստիտուցիոնալ առումով սփյուռքի նկատմամբ քաղաքականության, ռազմավարության մշակման և իրականացման մոդելը պետք է հենված լինի տվյալ պետության և իր սփյուռքի առանձնահատկությունների վրա: Ինչ կարգավիճակ և կառուցվածք պետք է ունենա որևէ պետության՝ սփյուռքի հետ աշխատանքների համար նախատեսված կառույցը, կախված է տվյալ երկրի հասարակական, մշակութային, տնտեսական, քաղաքական, ինչպես նաև սփյուռքի պատմության, աշխարհագրության և կազմակերպական առանձնահատկություններից և կարիքներից:

Երրորդ ենթագլխում՝ **«Սփյուռք-ընդունող երկիր հարաբերությունների քաղաքական համատեքստը»,** ներկայացվում են ընդունող երկրներում սփյուռքների ներգրավվածության հիմնական ձևերը, ընդունող հասարակության՝ սփյուռքի նկատմամբ վերաբերմունքի, ընդունող հասարկության նկատմամբ սփյուռքի որդեգրած դիրքավորմանը վերաբերող հարցեր, որոնք բազմաշերտ իրողություններ են և առաջին հերթին կապված են ընդունող երկրներում ներգաղթյալների համարկման աստիճանի և դրա հնարավորությունների հետ: Մասնավորապես արդյունաբերացված ժողովրդավարական երկրները փոքրամասնություններին ընձեռում են գրեթե հավասար հնարավորություններ, ինչը հանգեցնում է լիակատար ինտեգրման, երբեմն՝ ձուլման, սակայն քաղաքական պայմանների վատթարացման դեպքում ներգաղթյալների մոտ կարող է արթնանալ կամ ուժեղանալ էթնիկ ինքնությունը, զարգանալ դեպի հայրենիք վերադարձի գաղափարը:

Չորրորդ ենթագլխում՝ **«Հայկական սփյուռքի քաղաքական դերակատարության խնդիրը արդի փուլում»,** վերլուծվում և գնահատվում է ՀՀ-Սփյուռք գործակցությունը, հայկական սփյուռքի քաղաքական դերը արդի փուլում: Փորձ է կատարվում վեր հանելու այն առանցքային գործոններից մի քանիսը, որոնք լրջագույնս վնասել են ՀՀ-Սփյուռք գործակցությանը, համազգային խնդիրների լուծման գործում հնարավոր առավելագույն արդյունքի ապահովմանը: Այդ առումով հատկանշական է այն փաստը, որ հետանկախության շրջանում Հայաստան-Սփյուռք հարաբերություններում պետական քաղաքականության հիմքում եղել է, ոչ թե հստակ տեսլականը, երկարաժամկետ, ապագային միտված ռազմավարությունը, այլ Սփյուռքի հետ հարաբերությունների կառուցման վերաբերյալ Հայաստանում իշխող քաղաքական ուժերի ունեցած դիրքորոշումներն ու պատկերացումները, որոնք չեն ապահովել կայուն զարգացման հուն և միասնական տրամաբանություն: Հատկանշական է նաև տարբեր երկրներում

Սփյուռքի քաղաքականապես ակտիվ կառույցների համատեղ գործունեության և դրանում ՀՀ-ի մասնակցության և այն ինստիտուցիոնալ մեխանիզմների պակասը, որը պետք է հնարավորություն տար համակարգելու սփյուռքյան կառույցների աշխատանքը, կապելու մեկը մյուսին և պետությանը: Միաժամանակ ընդգծվում է, որ չնայած վերոնշյալին, հայկական քաղաքակրթության ինքնապահպանման համար, դեռևս առկա է ազգային շահերը պաշտպանելու բավականաչափ ներուժ:

Եզրակացության մեջ ամփոփվել են ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները.

- 1980-ականների վերջից և 1990-ականներից սկսած գիտությունների շարքում իր տեղն է հարթել սփյուռքագիտությունը, որը մեկտեղում է պատմագիտությունը, մարդաբանությունը, քաղաքագիտությունը, սոցիոլոգիան և մի շարք այլ գիտակարգեր: Թեև սփյուռքագիտությունը լայնորեն զարգանում է աշխարհի տարբեր երկրներում, սակայն տիրապետող դիրքեր ունի և տեսական միտք արտահանող հիմնական երկիրը Միացյալ Նահանգներն է, որտեղ էլ հենց սկիզբ են առել սփյուռքի վերաբերյալ տեսական մակարդակի գիտական քննարկումները:
- Սփյուռքի տեսական քննարկումներում հետազոտողների մոտեցումները տարբեր են, ուստի առանձնացվել են տեսաբանական մի քանի ուղղություններ՝ ա) դասական կամ հայրենակենտրոն, բ) կոնստրուկտիվիստական կամ սփյուռքը որպես անկախ միավոր դիտող, գ) հետարդիական կամ հայրենամերժ: Տեսաբանական նշված ուղղությունները ոչ միայն տարբերվում են սփյուռքին առնչվող մի շարք կարևոր երևույթների մեկնաբանման հարցում, այլև երբեմն գտնվում են հակադիր բևեռներում:
- Սփյուռքի սահմանման համար առաջարկվել են տարբեր հարացույցներ, սակայն առավել ընդունելի է այն մոտեցումը, որը սփյուռքը չի դիտում որպես կայուն և ֆիքսված երևույթ, այլ սոցիալական տեղաշարժերի, գործընթացների, ինչպես նաև հայրենիքի և ընդունող երկրի հետ կապի տարբեր դրսևորումների հոլովույթում մշտապես ձևավորվող իրողություն, որի համար մեծ դեր ունի մշակութային, քաղաքական վերնախավը, որը ծրագրավորված նպաստում կամ ներգործում է սփյուռքի կազմավորման, պահպանման վրա, ձևավորում նրա քաղաքական օրակարգը:
- Թեև հայ պատմագիտության մեջ սփռված հայության պատմությունը բաժանվում է հայ գաղթաշխարհի և հայկական սփյուռքի՝ հիմք ընդունելով 1915թ. Հայոց ցեղասպանությունից հետո տեղի ունեցած փոփոխությունները, որպես սոցիալական ձևավորում՝ հայ գաղթաշխարհը տիպիկ սփյուռքային երևույթ է, երբ այն դիտում ենք սփյուռքի արդի տեսության, երևույթի բնութագրման համար ընտրված չափորոշիչների տեսանկյունից, ուստի այն ևս կարող ենք անվանել «սփյուռք»: Այդկերպ հայ գաղթաշխարհը և հայկական սփյուռքը՝ որպես մեկ ամբողջություն դիտարկելը կարևորվում է ինքնության տարրերի պահպանության և հայության քաղաքակրթական հեռանկարին առնչվող հարցերի տեսանկյունից:

- Համաշխարհայնացման գործընթացները երբեմն հիմք են դարձել եզրակացնելու, որ սփյուռքներն աստիճանաբար կհամարկվեն ընդունող երկրներում, կձուլվեն և վերջնականապես կանհետանան, սակայն խորքային դիտարկումները ցույց են տալիս, որ դրանք դեռևս պահպանվելու բավականաչափ ռեսուրսներ ունեն: Ավելին՝ համաշխարհայնացման և բազմամշակութայնության ներկայիս միտումները երբեմն ավելի շատ ուժեղացնում են որոշ սփյուռքների՝ հնարավորություն տալով ձեռք բերելու մշակութային, գաղափարական, տնտեսական և սոցիալական լրացուցիչ միջոցներ:
- Տեսաբանների կողմից առաջարկվել են սփյուռքի դասակարգման տարբեր մոդելներ, որոնք հենված են տարբեր չափորոշիչների վրա: Այդ մոդելները երբեմն ստվերում են այն ներքին խորքային գործընթացները, որոնք կարող են տեղի ունենալ որևէ սփյուռքում, սակայն հնարավորություն են տալիս ունենալու տարբեր սփյուռքների խճանկարային պատկերը, համեմատելու նրանց ծագման, ձևավորման պատմությունը, ընդունող երկրներում հիմնական զբաղմունքները, հայրենիքի հետ հարաբերությունները և այլ հատկանիշներ:
- Սփյուռքի տիպաբանական մոդելներում հայկական սփյուռքին, տրվում են տարբեր բնութագրումներ, որոնցից են՝ «զոհ սփյուռք», «ձեռնարկատիրական սփյուռք», «պետականահեն սփյուռք» և այլն: Ներկայումս հայկական սփյուռքում տեղի են ունենում կերպափոխման գործընթացներ և նրա տիպաբանումը գիտական, տեսաբանական խնդիր լինելուց բացի հայության քաղաքակրթական հեռանկարին վերաբերող իրողություն է: Ինչպիսի դիմագիծ կունենա կերպափոխվող հայկական սփյուռքը, մեծապես կախված է վերնախավերի աշխատանքից, աշխարհի հայության, սփյուռքյան խիստ բազմաշերտ համայնքների համար ապագային միտված օրակարգեր մշակելու և այն իրագործելու կարողությունից:
- Սփյուռքի քաղաքական դերի կարևոր առանձնահատկություններից է ազգի բազմաթիվ հատվածները աշխարհի տարբեր վայրերում ակտիվացնելու հնարավորությունը: Նորագույն տեխնոլոգիաները, հաղորդակցության միջոցները սփյուռքին թույլ են տալիս գործելու և անդրազգային քաղաքականությամբ զբաղվելու ճիշտ ժամանակին: Ընդ որում, առաջադրվող մի շարք քաղաքական խնդիրներ՝ հիմնադրամների ստեղծում, հանրային կապեր, լոբբինգ և այլն, կարող են լուծվել մի վայրում, մյուսները՝ ընտրական կամ ռազմական քարոզչություն, զանգվածների մոբիլիզացում և այլն, մեկ այլ վայրում:
- Սփյուռքի գործունեության ցանցային բնույթը հնարավորություն է տալիս բազմամակարդակ և զարգացած անդրազգային կապերի միջոցով գործի դնել սփյուռքի ցանցային համակարգերը՝ արագ փոխանցելով ռեսուրսներ, փորձ, հմտություններ և գաղափարներ: Իսկ ռեսուրսների փոխանցման հարցում պետություն-սփյուռք համագործակցության ձևերն ու ոճը այն հիմնական գործոններից են, որոնք խթանում կամ վնասում են հայրենիք-սփյուռք հարաբերությունները:

- Հարաբերությունների ճիշտ կառուցման պարագայում սփյուռքը կարող է նշանակալի դերակատարում ունենալ հայրենի պետության զարգացման հարցում, սակայն, գոյություն չունի պետություն-սփյուռք արդյունավետ քաղաքականության ընդհանրական բանաձև: Այն, ինչպես նաև նրա իրականացման ինստիտուցիոնալ լուծումները պետք են բխեն տվյալ պետության և նրա սփյուռքի հասարակական, մշակութային, տնտեսական, քաղաքական առանձնահատկություններից:
- ՀՀ-ն մշտապես փորձել է տարբեր ձևաչափերով, գործիքներով համագործակցել Սփյուռքի հետ, օժանդակել Սփյուռքի խնդիրների լուծմանը, օգտագործել Սփյուռքի ներուժը ի շահ իր ռազմավարական, տնտեսական, քաղաքական և համազգային նպատակների, սակայն հնարավոր առավելագույն արդյունքների ապահովումը լրջորեն սահմանափակվել է՝ պայմանավորված կազմակերպական թերություններով և միասնական քաղաքականության բացակայությամբ:
- Ներկայումս Հայաստանի Հանրապետության ու աշխարհասփյուռ հայության առջև ծառացած արտաքին և ներքին մարտահրավերները պահանջում են նոր որակ, ձև և բովանդակություն հաղորդել Հայաստան–Սփյուռք գործակցությանը՝ հիմնված ինչպես միջազգային փորձի, այնպես էլ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների պատմության հետահայաց վերլուծման և արդյունավետ գործակցության հիմնական խոչընդոտների չեզոքացման վրա:
- Աշխարհաքաղաքական ներկա փոփոխությունների պայմաններում հայկական քաղաքակրթության ինքնապահպանության և ինքնաթարմացման ուղղությամբ խիստ զգալի է թիրախային աշխատանքներ տանելու անհրաժեշտությունը: ՀՀ-ում և հայկական սփյուռքում ազգի ստեղծագործ փոքրամասնությունը (էլիտան) իր առաքելությունը պետք է իրականացնի՝ ընդունելով հայկական պետության և Սփյուռքի ներկա իրավիճակին, սպառնալիքներին, տարածաշրջանային և գլոբալ զարգացումներին համարժեք գաղափարների, արժեքների, աշխարհում հայության պատշաճ դիրքավորման և ապագային միտված ծրագրերի մշակման մարտահրավերը:

Ատենախոսության հիմնադրույթները ներկայացված են հետևյալ հրապարակումներում.

1. Վարդանյան Հ., Գաղթականությանը վերաբերող մի քանի բառերի եզրութային արժեքը հայերենում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2016, № 1.5 (15), էջ 124-128:
2. Վարդանյան Հ., Սփյուռքի սահմանումը և եզրույթի իմաստային ընդլայնման պատճառները ըստ Խաչիկ Թեոլեոլյանի, «Հայագիտության հարցեր» հանդես, 2016, № 2 (8), էջ 95-108:
3. Վարդանյան Հ., Տեսաբանական ակնարկ սփյուռքի քաղաքական դերակատարության շուրջ, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2018, էջ 253-260:
4. Վարդանյան Հ., Սփյուռքի տիպաբանությունը և հայ սփյուռքը, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2020, № 1, էջ 202-208:
5. Վարդանյան Հ., Սփյուռքի նկատմամբ հայրենի (ծագման) երկրների պետական քաղաքականության տիպաբանությունը, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2021, № 2, էջ 45-58:
6. Վարդանյան Հ., Սփյուռքի հիմնական բնութագրիչ հատկանիշները ժամանակակից սփյուռքագիտական տեսություններում, «Վեմ» համահայկական հանդես, ԺԳ (ԺԹ) տարի, 2021, № 4, էջ 10-27:
7. Վարդանյան Հ., «Սփյուռք» հասկացության իմաստաբանական, հայեցակարգային փոփոխությունները և Հայկական սփյուռքի պարագան, Հայոց պատմության հարցեր (գիտական պարբերական), 2022, 25 (2), էջ 155-178:

ВАРДАНЯАН ГРАЦИН ВАРДАНОВНА

Диаспора в современном историографически-теоретическом дискурсе (конец 20-го века – начало 21-го века)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 "Всемирная история".

Защита диссертации состоится 21 декабря 2023 г. в часов 14:30 на заседании Специализированного совета 069 "Всемирная история" ВАК РА, действующего при Историческом факультете Ереванского государственного университета. Адрес: 0025 Ереван, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Основной целью данной диссертации является анализ современного теоретико-историографического дискурса диаспоры, теории диаспоры и ее основных проблем.

Структура диссертации соответствует цели и основным задачам исследования. Работа состоит из введения, трех глав, заключения и библиографии.

Во Введении обосновываются актуальность темы, ее практическая значимость, определяются цели, задачи и новизна исследования. Представлены научные результаты, выносимые на защиту и степень научной разработанности проблемы. Дается краткий анализ структуры и методологии исследования.

В первой главе «Теоретическое обозрение диаспоры и семантические, концептуальные изменения понятия “диаспора”» представлен процесс формирования основных теорий диаспоры, научные подходы к определению данного термина. В научной среде сформировались три основные теоретические направления, изучающие понятие «диаспора». Данные направления содержат различия в определении ряда понятий и явлений, а в некоторых вопросах представляют совершенно противоположные подходы. Существует несколько подходов, объясняющих термин «диаспора». Наиболее приемлемым из них является подход, рассматривающий диаспору не как статичное, а как постоянно меняющееся явление, формирующееся в ходе политических и культурных процессов. В качестве важных факторов влияния на диаспоры рассматриваются культурная и политическая элиты. Последняя влияет на образование и поддержание диаспоры, формирует ее политическую повестку.

Во рамках второй главы «Основные особенности и типология диаспоры» представлены характеристики диаспоры, ее отличия от других подобных групп, образовавшихся за пределами родины, а также вопросы идентичности. Проведены сравнительное изучение диаспор и типологических моделей, а также типологическая характеристика армянской диаспоры. Подчеркивается различие критериев в рамках существующих моделях классификации, которые часто отодвигают на второй план внутренние процессы, протекающие в диаспорах. В связи с этим, отмечается важность понимания указанных процессов и необходимость выхода за рамки условных критериев типизации.

В третьей главе «Диаспора как политический фактор: проблема политической роли армянской диаспоры на современном этапе» рассматриваются основные направления политической деятельности диаспор, отношения между диаспорой и принимающей страной. С целью выявления предпосылок эффективного сотрудничества государства и диаспоры представлены типология, институциональные и стратегические особенности политики, проводимой государствами происхождения (странами происхождения) в отношении своей диаспоры. В этом контексте анализируется и оценивается политическая роль армянской диаспоры на современном этапе в рамках сотрудничества РА-Диаспора.

Предпринимается попытка выявить некоторые ключевые факторы, негативно повлиявшие на сотрудничество РА-Диаспора. Примечательно, что после обретения независимости государственная политика в отношении сотрудничества РА-Диаспора основывалась не на долгосрочной стратегии, а на позициях и подходах правящих политических сил в Армении, что замедляло процесс устойчивого развития. Также отмечается отсутствие совместной деятельности политически активных структур Диаспоры и отсутствие координации со стороны РА. Подчеркивается, что в Армении не созданы институциональные механизмы и инфраструктуры, которые должны обеспечить координацию работ диаспоральных структур и возможность их взаимодействия как друг с другом, так и с государством.

В Заключении приведены основные результаты исследования.

HRATSIN VARDAN VARDANYAN

Diaspora in contemporary historiographical-theoretical discourse (late 20th and early 21st centuries)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "Word History" 07.00.02.

The defense of the disseration will be held on December 21, 2023, at 14:30 at the Session of the Specialized Council 069 "World History" at the Yerevan State University. Address: 0025, Yerevan, Abovyan str. 52.

SUMMARY

The primary purpose of the present dissertation is the analysis of the contemporary historiographical-theoretical discourse of diaspora, the theories of diaspora and its main problems. The structure of the dissertation corresponds to the purpose and the main tasks of the research and consists of an introduction, three chapters, conclusion and bibliography.

The Introduction substantiates the topicality, the aim, and the objectives of the theme, the academic novelty, and the main clauses to be defended. It presents the theoretical and practical significance of the dissertation, the degree of academic development of the issue, the object, and the subject of the research, as well as the methodology.

The first chapter of the dissertation, "Diaspora Theorization and Semantic, Conceptual Changes of the "Diaspora" Concept", presents the process of formation of the main theories of diaspora, and scientific approaches to the definition of the term "diaspora". Three main theoretical directions have been formed, which not only differ in the interpretation of a number of important phenomena related to diaspora but are also sometimes located in opposite poles. Different paradigms have been proposed to define the term "diaspora", but the most acceptable is the approach that does not see diaspora as a stable and fixed phenomenon, but rather a phenomenon that is constantly formed during various social, cultural and political processes and for which the cultural and political elite has a major role. The latter systematically promotes and influences the formation and maintenance of the diaspora, and shapes its political agenda.

The second chapter of the dissertation, "The main characteristics and typology of the diaspora", presents the characteristics of diaspora, its differences from other similar groups established outside the homeland, issues of identity, the comparative study of diasporas and typological models, the typological characteristics of the Armenian Diaspora. It is emphasized that the typological models proposed by theorists mainly differ from each other in the criteria chosen for classification. At the same time,

these models often overshadow the deep internal processes that can take place in diasporas. Therefore, in order to understand the mentioned processes, it is necessary to look beyond the criteria conventionally chosen for the typology.

In the third chapter of the dissertation, "Diaspora as a political factor: the issue of the political role of the Armenian diaspora at the current stage", the main directions of the political activity of the diasporas and the relations between the diaspora and the host country are examined. Aiming to highlight the prerequisites for effective state-diaspora cooperation, the typology, institutional, and strategic features of the policies implemented by home states (countries of origin) towards their diaspora are presented. In the context of the above mentioned, the RA-Diaspora cooperation, and the political role of the Armenian Diaspora at the current stage are analyzed and evaluated.

An effort (experience) is being made to highlight some of the key factors that have damaged the RA-Diaspora cooperation. In that sense, it is noteworthy that in the post-independence period, Armenia-Diaspora state policy has not been based on a long-term strategy, but on the positions and approaches of the ruling political forces in Armenia regarding the construction of relations with the Diaspora, which did not ensure sustainable development. Also noteworthy is the lack of joint activity of politically active structures of the Diaspora in different countries and the lack of participation and coordination of RA in it. RA has not created the institutional mechanisms and infrastructures that should provide an opportunity to coordinate the work of diaspora structures, to connect one to another and the state.

The main results of the study are summarized in the conclusion.